EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

գանգատ թիվ 36588/13

Հակոբ ԹՈՍՈՒՆՅԱՆՆ ընդդեմ Հայաստանի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), 2019 թվականի դեկտեմբերի 17-ին հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek]՝ *Նախագահ*,

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Պերե Պաստոր Վիլանովա [Pere Pastor Vilanova]՝ *դատավորներ*,

եւ Աբել Կամպոս [Abel Campos]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

հաշվի առնելով 2013 թվականի մայիսի 29-ին ներկայացված վերոնշյալ գանգատը,

հաշվի առնելով պատասխանող Կառավարության կողմից 2019 թվականի մարտի 15-ին ներկայացված հայտարարությունը, որով Դատարանից խնդրվում է գանգատը հանել քննվող գործերի ցուցակից, եւ դիմումատուի պատասխանն այդ հայտարարությանը,

անցկացնելով խորհրդակցություն, կայացրեց հետեւյալ որոշումը.

ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԸԹՆԱՑԱԿԱՐԳԸ

Դիմումատուն՝ պրն Հակոբ Թոսունյանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, որը ծնվել է 1959 թվականին եւ ապրում է Հայաստանի Հանրապետությունում՝ Քաջարան քաղաքում: Նրան Դատարանում ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Տ. Հայրապետյանը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը, իսկ այնուհետեւ՝ պրն Ե. Կիրակոսյանը:

Դիմումատուն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերով բողոք է ներկայացրել առ այն, որ 2013 թվականի սեպտեմբերի 18-ից մինչեւ 2016 թվականի մարտի 18-ն ընկած ժամանակահատվածում իրեն կալանքի տակ պահելը եղել է կամայական եւ անօրինական, չի համապատասխանել «ողջամիտ ժամկետի» պահանջին, եւ որ ներպետական դատարանները չեն ներկայացրել վերաբերելի եւ բավարար հիմքեր իր կալանավորման համար:

Գանգատն ուղարկվել է Կառավարություն:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Դիմումատուն բողոքել է, որ 2013 թվականի սեպտեմբերի 18-ից մինչեւ 2016 թվականի մարտի 18-ն ընկած ժամանակահատվածում իրեն կալանքի տակ պահելը եղել է կամայական եւ անօրինական, չի համապատասխանել «ողջամիտ ժամկետի» պահանջին, եւ որ ներպետական դատարանները չեն ներկայացրել վերաբերելի եւ բավարար հիմքեր իր կալանավորման համար: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերը:

Գործը բարեկամական կարգավորման ճանապարհով լուծելու փորձերը ձախողելուց հետո Կառավարությունը 2019 թվականի մարտի 15-ի գրությամբ Դատարանին տեղեկացրել է, որ գանգատով բարձրացված խնդրի լուծման նպատակով առաջարկում է միակողմանի հայտարարություն անել: Նրանք այնուհետեւ Դատարանից խնդրել են գանգատը հանել քննվող գործերի ցուցակից՝ համաձայն Կոնվենցիայի 37-րդ հոդվածի:

Հայտարարության բովանդակությունը հետեւյալն է.

«Ես՝ պրն Եղիշե Կիրակոսյանս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչս, սույնով հայտարարում եմ, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է, որ 2013 թվականի սեպտեմբերի 18-ից մինչեւ 2016 թվականի մարտի 18-ն ընկած ժամանակահատվածում դիմումատուին կալանքի տակ պահելը չի համապատասխանել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին: Բացի այդ, նախնական կալանքը չի համապատասխանել «ողջամիտ ժամկետի» պահանջին եւ դրա համար ներպետական դատարանների կողմից որպես «վերաբերելի եւ բավարար» հիմքեր ներկայացվող պահանջին, որոնք ամրագրված են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ընդունելով դիմումատուի իրավունքների խախտման փաստը, առաջարկում է դիմումատու Հակոբ Թոսունյանին վճարել 10 000 եվրո՝ որպես նրա կողմից կրած ցանկացած եւ բոլոր վնասի (ների) հատուցում:

Վերոնշյալ գումարն ազատված կլինի գանձման ենթակա ցանկացած հարկից եւ կփոխարկվի ՀՀ դրամով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով, որը ենթակա է վճարման Դատարանի կողմից գործը քննվող գործերի ցանկից հանելու վերաբերյալ կայացված որոշման մասին ծանուցումն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում: Այս գումարը նշված եռամսյա ժամկետում չվճարելու դեպքում Կառավարությունը պարտավորվում է այդ ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, վճարել այդ գումարի նկատմամբ հաշվարկված պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ: Վճարումը համարվում է գործի վերջնական լուծում:

Ուստի Կառավարությունը, հաշվի առնելով Դատարանի նախադեպային իրավունքից բխող չափորոշիչներն այն մասին, թե երբ է նպատակահարմար 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետին համապատասխան եւ Կառավարության կողմից արված միակողմանի հայտարարության հիման վրա որոշում կայացնել գանգատը գործերի ցուցակից հանելու վերաբերյալ, նույնիսկ եթե դիմումատուն ցանկանում է, որ գործի քննությունը շարունակվի, նշում է, որ սույն հայտարարությունը Դատարանի կողմից կարող է ընդունվել որպես «որեւէ այլ պատճառ»՝ Դատարանի կողմից քննվող գործերի ցուցակից գործը հանելը հիմնավորելու համար, ինչպես նշված է Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետում, եւ առաջարկել Դատարանին սույն գործը հանել քննվող գործերի ցուցակից»:

Դիմումատուն չի արձագանքել Կառավարության միակողմանի հայտարարությանը:

Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 37–րդ հոդվածով սահմանվում է, որ Դատարանը քննության ցանկացած փուլում կարող է որոշել գանգատը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» կամ «գ» ենթակետերում նշված եզրակացություններից որեւէ մեկին: 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով Դատարանին մասնավորապես իրավունք է վերապահվում գործը հանել քննվող գործերի ցուցակից, եթե.

«Դատարանի կողմից հիմք ընդունված որեւէ այլ պատճառով գանգատի քննությունը շարունակելն արդարացված չէ»:

Այն վերահաստատում է նաեւ, որ որոշ հանգամանքներում Դատարանը կարող է գանգատը հանել գործերի ցուցակից՝ 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝պատասխանող Կառավարության կողմից միակողմանի հայտարարության հիման վրա, նույնիսկ եթե դիմումատուն ցանկություն է հայտնում, որ գործի քննությունը շարունակվի:

Այդ նպատակով Դատարանը հայտարարությունը քննել է իր նախադեպային իրավունքից, մասնավորապես՝ Թահսին Աջարի [*Tahsin Acar*] գործով վճռից բխող սկզբունքների լույսի ներքո (*Թահսին Աջարն ընդդեմ Թուրքիայի* (նախնական առարկություններ) [ՄՊ] *[Tahsin Acar v. Turkey,* [GC]], թիվ 26307/95, §§ 75-77,

ՄԻԵԴ 2003-VI, նաեւ՝ *«Վազա» ՍՊԸ-ն ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [*WAZA Sp. Z o.o. v. Poland* (dec.)], թիվ 11602/02, 2007 թվականի հունիսի 26, եւ *Սուլվինսկան ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [*Sulwińska v. Poland* (dec.)], թիվ 28953/03, 2007 թվականի սեպտեմբերի 18):

Դատարանը մի շարք, այդ թվում՝ Հայաստանի դեմ բերված գործերով ձեւավորել է նմանատիպ իրավիճակներում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերի խախտումների վերաբերյալ բողոքների մասով իր գործելակերպը (տե՛ս, օրինակ՝ *Ելոեւն ընդդեմ Ուկրաինայի* [*Yeloyev v. Ukraine*], թիվ 17283/02, §§ 52-55, 2008 թվականի նոյեմբերի 6, *Խարչենկոն ընդդեմ Ուկրաինայի* [*Kharchenko v. Ukraine*], թիվ 40107/02, §§ 73-76, 2008 թվականի նոյեմբերի 6, *Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի* [*Muradkhanyan v. Armenia*], թիվ 12895/06, §§ 79-87, 2012 թվականի հունիսի 5, եւ *Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* [*Ara Harutyunyan v. Armenia*], թիվ 629/11, §§ 30-37, 2016 թվականի հոկտեմբերի 20):

Հաշվի առնելով Կառավարության հայտարարության մեջ բերված փաստարկների բնույթը, ինչպես նաեւ առաջարկվող փոխհատուցման գումարը, որը համապատասխանում է նմանատիպ գործերով տրամադրված գումարի չափին, Դատարանը համարում է, որ գանգատի քննությունը շարունակելն այլեւս արդարացված չէ (37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետ):

Բացի այդ, հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները եւ մասնավորապես այս հարցի վերաբերյալ գոյություն ունեցող հստակ եւ ծավալուն նախադեպային իրավունքը, Դատարանը համոզված է, որ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք դրսեւորելու պարտավորությունը, ինչպես սահմանված է Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով, չի պահանջում շարունակել գանգատի քննությունը (37-րդ հոդվածի 1-ին կետ՝ վերջնամաս):

Եվ վերջապես, Դատարանն ընդգծում է, որ եթե Կառավարությունը չպահպանի իր միակողմանի հայտարարության պայմանները, գանգատը կարող է

վերստին ընդգրկվել գործերի ցուցակում՝ համաձայն Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 2-րդ կետի (*Յոսիպովիչն ընդդեմ Սերբիայի* (որոշում) [*Josipović v. Serbia (dec.)*], թիվ 18369/07, 2008 թվականի մարտի 4):

Հաշվի առնելով վերոնշյալը՝ նպատակահարմար է գործը քննվող գործերի ցուցակից հանելը:

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

Նկատի է առնում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերի մասով պատասխանող Կառավարության հայտարարության պայմանները, ինչպես նաեւ դրանցով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու եղանակները.

Որոշում է գանգատը հանել իր կողմից քննվող գործերի ցուցակից՝ համաձայն Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2020 թվականի հունվարի 16-ին:

Աբել Կամպոս	Քրշիշթոֆ Վոյտիչեկ
[Abel Campos]	[Krzysztof Wojtyczek],
Քարտուղար	Նախագահ